

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐԻ»

ԴՐԱՄ ԿԱՄ ԲՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՈՒՂՂԱՆ ԱՌ

Տնօրինութիւն ՆՈՐ ՕՐ Բագրի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Ձեռագիրներն ետ չեն դարձաւոր,
ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՒՆԻԵ

ՆՈՐ ՕՐ

ՀԱՐԱԹ ԱԹԵՐԹ
ԱԶ ԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԾԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԿԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ ԴՐՏ. ՈՂՋ
Գանձիւն Կամար վեցամսեայ 20
» » Երամսեայ 12
Շրջակայից » վեցամսեայ 25

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
վեցամսեայ Յրանգ 7

ՌՈՒՍՈՒՅՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ
վեցամսեայ Բուրձի 3

ԲԱԿԱՆՈՐԴԱԿՑՈՒԹ ԿԱՆԻՍԿ Է
ԵՒ ԲՂԹԱՍԱՐԻ ՄԱԹԵՐ
Խմբագրութեանս վրայ և

ՆՈՐ ՕՐ ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆԻ ստորագրութիւնը
չը կրող «ՆՈՐ ՕՐ»-ի ընկալագիրները
անվաւեր կը նկատուին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(ԳՐԱՐԿԱՍՏԱՆԻ ԱՊԳԱՆ)

Կերբ Ասիոյ մէջ երկիր մը կայ ան-
սահման տարածութեան և հարստութեան
տէր, հին անգամ արտադրութեան մէջ ճը-
շամաւորագոյն տեղը բնօրդ, Պարսկաստա-
նըն է այն՝ որի վրայ դարձած է այսօր
ուշադրութիւնը Պեղեցագետաց, Ռուսաց և
Անգլիացուց: Թէ՛հրամի զինվորական դես-
պանին տուած տեղեկութեանցը համեմատ-
այսօր Պարսկաստանի ճակատագիրը վար-
չակամ տեսակէտով պատիկ զինվորացի-
ներուն ձեռքով է, ինչպէս որ տմեսակամ
և վաճառակամակամ տեսակէտով Ռուսիոյ
և Անգլիոյ ձեռքով է:

Պարսկաստանի մաքսային գործոց մա-
խարազը Պ. Նաուս զինվորացի մ'է,
մամապէս երկրագործակամ էմօէ-
միօն Պ. Տաշէր որուն երկրագործակամ
մախարար կոչուելը շատ հետու չէ, և
եւմտական մախարար Պ. Էմօէլ, արտաքին
գործոց մախարարի իրաւագէտ խորհրդա-
կամ Պ. Ժօզէ Էմօպիզ, թղթատամ վար-
չութեան ընդհ. վերատեսուչ Պ. Վէրգօթէ-
րիէն, կնուղեաց տնօրէն Էմօթէմիէն Պ.
Տիւպրիզ, Պարսկական դրամատունը շինող
երկրաչափ Պ. Ժիլիմէլու ամենքն ալ զին-
վորացի են, որոնց ծառայութեան Պարսից
Մուզաֆֆէրէտտիմ Շահը խիստ գոհ մտա-
ցած է, և այժմ գոհ մտացած է որ ուրիշ
ազգի պաշտօններուն վրայ խօսուելը
անգամ չուզեր:

Մինչ զինվորացիք Պարսկաստանի մեր-
քին վարչական գործերուն իբրև տէր Պարս-
կաստանի գօթեթը կը ընեն, միւս կողմէ՛
Ռուսիա փոխատուութիւններ ընելով, ու
երկաթուղեաց գծեր շինելու մեծաշնորհ-
մներ ստանալով կուզայ բաժնի մը կը
խլէ այդ մշտաւոր գօթեթէն:

Ռուսիա սկսելով Ռաշտէմ — Կասպից
ծովին մօտ — միջին և թէ՛հրամի հաղորդակ-
ցութեան ուղի մը շինեց անցեալ տարի,
այս օր ալ ձեռնարկած է շոգեմալային հա-
ղորդակցութեան գծի մը հաստատել Օտեսա-
յի ու Պարսից ծոցին մասահանգիստներուն
միջև: Ինչպէս որ կ'ըսէ Նոմոնեան թերթը
մը, Ռուսիա Պարսից ծոցին վրայ մաւա-
ային կայտ մը հաստատել վերջը, պի-
տի գայ ատեն մը որ սծուխի կայաններ
հաստատէ հոն, և պատերազմակամ մաւեր
ղըկէ Պարսկական շուրերուն վրայ, և օր
մ'ալ պիտի տեսնենք անգլիկական երկաթու-
ղիներուն հետ, այդ ատեն թերևս Պարսիկ
և Ռուս երկաթուղիներուն վերջին կայա-
նը ըլլայ Պեղեցագետաց, Պարսից ծոցին
վրայ, ուր ամրոցներ շինուելու հաւանա-
կութիւն մ'ալ կայ Ռուսիոյ կողմէն: Վեր-

չապէս Պարսկաստանի մէջ երկաթուղիներ
շինելու իրաւունքը ջարդիմ ձեռքը անցած
է, և երբ ու կէս միլիոնի մմամ ջնջին
գումարի մը փոխատուութեան շնորհիւ
Ռուսիա այսօր Պարսկաստանի հասոյթի
աղբուրները ձեռք առած է:

Մինչ Ռուսիա Պարսկաստանի հիւսիս-
յիմ մասերը կը շահագործէ ու անոր ելեւ-
մըտակամ ու տմեսակամ ոգևոյթ վրայ կը
տիրէ, անգլիոյ Անգլիա հարաւային մասին
մէջ բնու պարագ չի կենար: Ռուս թղթ-
թակցի մը կը գրէ թէ՛ այդ կողմերը անգ-
լիացիք հեռագրակամ գիծեր հաստատած
են, և ամէն մէկ կայանի մէջ բազմաթիւ
անգլիացի պաշտօնատարներ կան որոնք
կ'ուսուումսիրեն այն կողմերու վիճակը և
կը տեղեկագրեն լոնտոն:

Իրաց վիճակը սա է թէ՛ Ռուսական մա-
մուլը Անգլիական գործունէութեան վրայ
իրար կ'անցնի Պարսկաստանի մէջ, Անգլի-
ական մամուլը ալ Ռուսական գործունէու-
թեան վրայ:

Վերջապէս այս և մամուլի մակարագայ-
ները մշտապէս կուտան թէ՛ Պարսկաստանի
ճակատագիրը հիմակուհի մայ Ռուսաց, Անգ-
լիացուց և պատիկ զինվորացուց ձեռքով է:

ԿԱՂԸ (ՍԹԵՅԱՆ 102ԱՆ)

Արդարութեան վրայ չէ խօսքս.
այլ Դիւանագիտութեան վրայ:

Ո՛ր, ե՛րբ խեղապտու եղաւ, ատի
քննելը շատ երկար բարակ բան կ'ըլ-
լայ. կան ոմանք որ կը հաւատան
թէ ի ծնէ է. Բայց եղելութիւնը կե-
ցած է, անկայանի, շօշափելի, ան-
ուրանալի, Դիւանագիտութիւնը կը
կաղայ և շատ գէշ կը կաղայ: Երկ-
րագունտիս ճամբաներուն վրայ ընդ
բարը կ'ընթանայ առանց կարենալու
յառաջանալ և ամեն երկու քայլ առ-
նելուն՝ անպատճառ քայլ մը ետ կ'եր-
թայ: Ստամբուկները՝ անոր ճամբուն
վրայ՝ կը քաջքնն վայն և անոր դի-
մացը ելող լուրջ մարդիկ կ'ըսեն
ուսերին թոթուելով:

— Ախ, դարձեալ սա խնդ պա-
ռան է . . .

Ամենքնիկ ալ կը յիշէք անոր վեր-
ջին շահատակութիւնները, որոնցմէ
ոմանք անդիմադրելի կերպով զուար-
ճաթիմ էին, ոմանք ալ ողբալի կեր-
պով տխուր: Հայաստան, թուրքի-
յունական կուր, սպանեամերիկեան
կուր, Լա-Հէյի վիհատողով, Չինաս-
տանի խռովութիւնը, — կաղը այս
ամենուն մէջ ալ խառնուեցաւ կաղն

ի կաղը ելաւ դնաց որ հոգայ այդ
բոլոր գործերը և մէկ հատը չկրցաւ
կարգադրել: Միշտ շատ ուշ հասաւ.
Երբեմն ալ ամենեւին ճամբայ չելաւ:

Չինաստանը անտարակոյս իր ամե-
նէն համբաւաւոր շահատակութիւնը
եղաւ. խեղճ խեղանդամը հոն տեղը
հաստատուած էր, և կրնար հոն երկար
ատեն ապրել խաղաղ և անվրդով:
Բայց որովհետեւ բնութիւնը անհան-
գարտ և կագաղարթոյց է, շատ չան-
ցաւ բոլոր բնակիչներուն հետ գէշ
մարդ եղաւ: Մերթ կ'ուզէր բնիկնե-
րը բռնի ուրիշ կրօնքի մը — ճիշտ
չէր զիտեր թէ ո՛ր կրօնքին — դար-
ձունել. մերթ անոնց ձեռքէն անել
կ'ուզէր իրենց նաւահանգիստներն ու
քաղաքները՝ երուպական քաղաքա-
կրթութեան ասիականին վրայ ունե-
ցած առաւելութիւնը անոնց ապացու-
ցանելու համար:

Օրին մէկն ալ, բնիկները զայրա-
ցան և ուզեցին անոր խերը անիծել.
Ոստիկանութիւնը օգնութեան կան-
չեց. Ոստիկանութիւնը վազեց եկաւ,
քանի մը հազար հոգի ջարդեց, քա-
նի մը հարիւր թանկագին անօթներ
յափշտակեց, և երկոտասանեակ մը
աստեղագիտական դիտակ տեղերէն
վերցուց. սաի բաւեց բարեկարգու-
թիւնը վերահաստատելու համար:

Այն ատեն տեղի ունեցաւ տեսա-
բան մը՝ որ աշխարհի պատմութեան
մէջ իր նմանը չէ ունեցած, Դիւա-
նագիտութիւնը, որ ոյժը իր կողմը
ունէր և որ տէր էր իր կամքը հար-
կագրելու, ձայն չհանեց: Անկարող
եղաւ բառ մը արտաբերել. խորհուրդ
խորհուրդի վրայ ըրաւ առանց յա-
ջողելու հասկնալ իսկ թէ ինչ էր
ուզածը: Ասի տասներկու ամիս տե-
ւեց: Տասներկու ամիսներ անցնելէն
վերջը, դեռ չէր կրցած ճշդել թէ
ինչքան տուգանք, ինչ փոխարինու-
թիւն, ինչ հատուցում ստանալ կը
փափագէր: Իր բոլոր զօրքերովը, բո-
լոր թնդանօթներովը, բոլոր նաւե-
րովը, ճամբան կորուսած, անպաշա-
պան, անտուն անպապէն մանուկէ մը
աւելի տկար, աւելի երկտուն, աւելի
տատամանած եղաւ:

Կաղը, առջիկ ճամբան բաց ունե-
նալով հանդերձ, ոչ միայն այլ ևս
յառաջ չգնաց, այլ եղած տեղը մը-
նաց. ծմբաբարձ դարձաւ . . .

Երբ մարդ մտածէ այս տեսարա-
նին խեղատակութիւնը և կարգ մը
ուրիշ տեսարաններու տիրութիւնը,
իրաւունք կ'ունենայ ըսելու թէ Դիւա-
նագիտութիւնը՝ բովանդակ իշխա-
նութիւնը ձեռքը ունենալովը, բոլոր
պատասխանատուութիւնները ստանձ-
նելովը, և բոլոր վստահութիւննե-
րը խաբած շլլալովը, պարտական կը
մնայ աշխարհի հանդէպ և հատուցում
մը կը պարտի անոր:

Արդ՝ այս ժամուս՝ կայ հատուցում
մը որ հնարաւոր է:

Հոն, Պաքըստանէն անդին, մեծ
այն Հայաստանին զօր Դիւանագի-
տութիւնը թողուց որ փղբոտեն, ծայ-
րասան, կտոր կտոր ընեն. կայ կղզի
մը որ դարերով չարչարանք ու կրո-
տանք կրեց, որուն պատմութիւնը ար-
ինագիծ տողերով կը գրուի և որ տա-
ռապած տանջանքներէն գեռ բոլորո-
վին ոգեւապառ է, կրետէն: Անի զգաց
համիտեան վարչութեան բովանդակ
սոսկումները. արտաքսումներ կրեց-
զրկանքներու բախեցաւ, տարագրու-
թիւններով տառապեցաւ, կոտորած-
ներու ենթարկուեցաւ: Տուայտանքի,
մուլուցքի և յուսահատութեան ծայրա-
գոյն սահմանները մղուեցաւ: Օսմանե-
ական լուծին տակ դեռ պիտի ճանգար,
եթէ փոքրիկ երկիր մը, Յունաստա-
նը, օր մը արիաբար ոտքի չ'ելէր և
հարստահարչին ասպարէզ չկարգար:

Այդ օրը, Պաքըստանեան ցամաքա-
կըզդիին կէսը հրոյ և արեան մատնը-
ուած էր, հարկ եղաւ որ Դիւանագի-
տութիւնը միջամտէր: Զոհը դահիճին
ձեռքէն ճողորկեց. այլ բոլորովին
չազատեց, վստան զի կազը բնու հաս-
տատուն և տեսական գործ մը չի տես-
ներ, իր կառուցած ամեն բաները
իրեն կը նմանին. գայթ ի գայթ կը
քալեն և անպատճառ մէկ կողմէն կը
դեղին:

Սուլթանին գերիշխանութիւնը կըզ-
գիին վրայ մնաց, ինչպէս որ Մա-
հիկն ալ մնաց զբոջակին վրայ: Ո՛հ
կրէտէի համար այդ ալ ծանր է:
Սոսկմամբ կը սարսուռայ երբ կը նըշ-
մարէ որ իր արիւնք վրայ կը տա-
րածուի անոր ստուերը՝ զօր կլստըր-
թօն «մեծ մարդասպանը» անուանեց-
ցատուէն կը գողայ երբ կը տեսնէ

թիւնն արդիւնաւոր կացուցանել և Գահիրէի ազգային գործոց ներկայիս բարւոյնը ու պագային երաշխաւորել:

Այս խնդիրներն էին՝

1 րդ. Գահիրէի Ազգային սնտուկին եւ շեմական կացութիւնն.

2 րդ. Ազգային սեփականութեանց ու կարուածոց վիճակն. և

3 րդ. Գահիրէի Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյ վերանորոգութեան հարկը:

* * *

1 րդ. Գահիրէի Ազգային սնտուկն 1000 եգիպտական ոսկի ողջ հասոյթ ունէր, մինչ ծախան էր 1,271 եգիպտական ոսկի:

Ելեմտական այս անհաւասարակշռութիւնը տարեկան 271 եգիպտական ոսկիոյ բաց մը կ'արտադրէր:

Ազգային սնտուկը տարեկան սոյն բացէն զատ ունէր նաև 10% տոկոսաւոր գրեթէ 1,200 եգիպտական ոսկի բաց պարտք, թող- լով ըսել առ ազգային սնտուկն հաստեցա- նելի Մուզաբայի սուրբէն ինչ տարուան — 1879 Մայիս 1/13—1887 Ապրիլ 30/12 Մայիս — Գահիրէի Ազգային սնտուկին վը- րայ զիջուած 180 օսմ. ոսկիոյ պարտքն:

2 րդ. Գահիրէի Եկեղեցին, վարժարան ու գերեզմանատունն ի միասին առեալ, ազ- գային 24 կտոր սեփականութեանց ու կալ- աւածոց գրեթէ իւրաքանչիւրն իրեն հետ լուծման կարօտ մէկ խնդիր ունէր, ազա- րակաց մեծագոյն մասն յատուկ ինամոց և գրեթէ բոլոր շէնքերն՝ տուն՝ կրպակ, եկե- ղեցի (Ս. Մինաս և Ս. Սարգիս, նոյնպէս նաև Ս. Աստուածածին Մայր Եկեղեցին) հիմնական նորոգութեան և մէկ քանի աւե- րակ տուններն ալ ի հիմանէ վերաշինութեան կը կարօտէին. ևս և ազգային գերեզմանա- տան արդի անպատուարեր վիճակը զարմա- նելն և վաշխուշ ու եգիպտաբնակ հայ գող- թականութեան պատուոյն արժանի դիրքի մը վերածելու հարկն անհրաժեշտ դարձած էր:

3 րդ. Գահիրէի Ս. Աստուածածին Մայր Եկեղեցին, որ կառուցեալ է 1830 թուակա- նին, խարխուղ վիճակի մէջ կը գտնուէր, այնպէս որ մտաւարտ վտանգն հեռացնելու համար հիւսիսային և հարաւային կողմերէն նեցուկներով երաշխաւորութեան առնուած էր, հետեալպէս և անմիջական վերանորո- գութեան կարօտ. այս էր կարգ մը եւրոպա- ցի և բնիկ ճարտարապետաց կարծիքն, որք քննած էին եկեղեցւոյ շէնքն և որք քննեցին իսկ մեր պաշտօնավարութեան անցեալ մի- ամսայ ժամանակամիջոցին մէջ:

Այս էր ահա Գահիրէի ազգային սնտու- սուկին կլեմտական վիճակն, ազգային սե- փականութեանց ու կարուածոց կացութիւնն և Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ շէն- քին վիճակն երբ, ինչպէս ի վեր անդը ը- սինք, անցեալ Մայիսի սկիզբն Պատ. Բա- զարական Ժողովոյ հետ ձեռնարկեցինք ի գործ:

Իրաց այս ցաւալի կացութիւնն, մանա- ւանդ ելեմտական կարի խնդրաբաշխ ու ան- ձուկ վիճակն անշուշտ ոչ նուազ փաստակար հետեանաց կը յանդէր և ամբողջեան կը մատնէր ազգային պաշտօնական մարմնոց բոլոր աշխատութիւններն ու ջանքերը, եթէ գեռ ևս շարունակէր. սոստի և իրաց այս ար- խուր վիճակին բարեօրման աւագ կարեոր- ութիւնն ընծայելով փութացինք Գահիրէի ազ- գային գործոց սոյն ապաքէն ցաւալի կա- ցութիւնն բացարձակ ընդարձակ տեղեկա- գիր մը մատուցանել առ Նորին Վսեմու- թեան Թագաւոր փաշա Յակոբեան, որ Եգիպ- տոսի Ազգային Գաւառական Վարչութեան Պատուարժան Քիզանար Ժողովէն (1885 Մայիս 5/17 նիստ էրդ.) Գահիրէի ելե- մտական ընդհանուր տեսուչ ընտրուած էր:

Նորին Վսեմութեան Թագաւոր փաշա ամեն ջանք ի գործ դրաւ զարմանելու համար իր- այ այս վիճակն և ուր ուրեքն իր անվի- ճելի գործունէութեամբն յաջողեցաւ Գեր- ազնիւ Տիկին Նուպար փաշայի նախաձեռ- նութեամբ և Նորին Բարձրութեան խօսիլու- հւոյն նախագահութեամբ ու բարձր հովա- նաւորութեամբն ի նպատակ Գահիրէի հայ գաղթականութեան ազգային կարեոր պիտո- յից պարահանդէս մը պատրաստել, որ տե- ղի ունեցաւ տարւոյս Մարտ ամսոյ 5/17 ին: Սոյն պարահանդիսին վեհութիւնն ու շքեղութիւնն, որ արդիւնք էր Նորին Վսե- մութեան Թագաւոր փաշայի մասնաւոր աշ- խատութեան, սքանչալոց նոյն իսկ օտար- ազգի բարձրաստիճան անձնաւորութիւնքն, և խիստ պատուաբեր եղաւ ազգին համար:

Պարահանդիսին զուտ հասոյթն եղաւ 109,158 եգիպտական ողջ դրուշ, որոյ վրայ բարդելով Ն. Բարձրութեան Նուպար փա- շայի և Նոյնին Վսեմութեանց Թագաւոր և Տիգրան փաշաներու մասնաւոր նուէրներն և 1885ին Ս. Աստուածածին եկեղեցւոյ վերանորոգման համար կարգեալ հանգանա- կիշ Պատ. Մասնախմբին հաւաքած գումարն, ընդ ամենն յանգեցաւ 156,275 եգիպտա- կան ողջ դրուշ:

Այս գումարէն հատուցուեցաւ Մեծ. Պո- ղոս էֆ. կարապետեանի ամբողջ պահանջը 75,606 դրշ. մնացեալ գումարէն որոշեալ է վճարուիլ հանգուցեալ կարապետ Գալ- ֆայեանի որդւոյն՝ Միրիճան Գալֆայեանի, որ ի մայրազաղաքս կը գտնուէր, պահանջը, որ մինչև տարւոյս Ապրիլ 15/27 բանած սոկոսով 41,585 եգիպտ. ողջ դրուշ կը յանգի: Սոյն պահանջքին վճարման համար երկիցս առ Բարձր Սրբադիւթիւնն Չեր գը- րած եմ, որ Միրիճանեան Գալֆայեան լի- ազօր փոխանորդ մը կարգէ ի Գահիրէ ստա- նալու համար իւր պահանջից նոյն գումար- ըն՝ յայտնելով միանգամայն թէ՛ Ապրիլ 15/27էն յետոյ այլ ևս սոկոս չի պիտի վճարուի:

Արդ՝ Գահիրէի ազգ. սնտուկն այլ ևս սոկոսաւոր պարտք չ'ունի, ի բաց առեալ մուզաբայի 180 օսմ. ոսկիոյ պարտքն, որ անտոկոս է, և որ պիտի կարգադրուի ան- տարակոյս, միայն թէ Ազգ. Պատ. Վար- չութիւնն հաճի գեռ ևս ժամանակ տալ, մինչև որ իրաց վիճակն հիմնապէս կար- գադրուի:

Գահիրէի ազգ. սնտուկն այս կերպով մէկ կողմէ 12,000 եգիպտ. ողջ դրուշ տա- րեկան սոկոս վճարելու հարկէն ազատած և միւս կողմէ տարեկան ծախսէն 12,036 ողջ դրշ. զեղուած լինելով՝ 24,036 դրշի գումար մը գոյացած է, որ 27,100 դրշի բացէն զեղելով կը մնայ սնտուկին բացը 3,036 դրշի անշան գումարը: Սոյն անշան բացը ո՛չ միայն պիտի գոցուի, երբ շինուի ազգ. աւերակ կարուածներէն մին կամ միւսը, որոց վերաբերմամբ նախապատրաստական որոշմունք եղած են արդէն, այլ և գումար մ'եւս պիտի յաւելնայ. իսկ մնացեալ գու- մարն՝ որ օսմ. Պանքան դրուած է, 1885ին բացուած ի վեր անդը յիշատակեալ հանգա- նակութիւնն ևս շարունակուելով և անկէ զոյանալից հասոյթին հետ միացուելով պի- տի յատկանայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ նորոգութեան, ոյր պիտի ձեռնարկուի քիշ միջոցէն, ինչպէս որոշեալ է:

Յիշեալ պարահանդիսին առթիւ, որմէ գոյացած արդիւնքովը վերոյգրեալ ազգօ- գուտ կարգադրութիւններն եղան, ժողո- վըրդական երկու ուղերձներ մատուցուե- ցան, մին՝ առ Ն. Բարձրութիւն խօսիլու- հին և միւսն՝ առ Ն. Ազնուութիւն ազգա- սէր Տիկին Նուպար փաշա, այր պատճենն է՝

«Նորին Ազնուութիւն ազգաւոր Տի- կին Նուպար փաշա.

«Ստորագրեալը սպառի սնին մասու- «ցանել իրենց որսազին շնորհակալութիւն- «ներն առ Նորին Ազնուաշուք Մեծութիւն «Տիկին Նուպար փաշա՝ այն ձեռնարկին «համար, զոր Նորին Ազնուութիւն հաճե- «ցաւ ի գործ դնել կարգադրելով ի նպատակ «բարձրաստիճան ազգային կարեոր պիտոյից՝ «տարւոյս Մարտ 17ի մեծ պարահանդիսն, «որ իւր շքեղութեամբն ու վեհութեամբը «խիստ պատուաբեր եղաւ Հայ ազգին «համար:

«Ստորագրեալը կը խնդրեն սր Նորին «Ազնուութիւն բարեհաճի շարունակել իւր «ազգասիրական քաղցր ակնարկն առ հայ «գաղթականութիւնն Գահիրէի, և ընդու- «նիլ անոնց ջերմագին բարեմտադրութիւն- «ներն և յիշուրթն օրհնութիւններն»: «Յ Ապրիլ 1887 ի Գահիրէ

(Ստորագրութիւնը)

Արժանէ յիշատակել աստանօր որ անց- եալ 1886 տարւոյ շրջանին մէջ շնորհիւ Նո- րին Բարձրութեան Նուպար փաշայի 1,000 ֆէտտան հող Ս. Աստուածածին Եկեղեցւոյ և 500 ֆէտտան Ալեքսանդրիոյ Ս. Պողոս և Պետրոս Եկեղեցւոյ նուիրուած է կառա- վարութեան կողմէ: Սոյն հողերը թէւպետ և մաքրուելու և կանոնաւոր ազարակի վե- ըածուելու համար ի սկզբան բաւական ծա- խուց կը կարօտին, այլ սակայն ի վերջոյ տարեկան պատկառելի գումար մը հասոյթ բերել կը խոստանան:

Հարկ է խոստովանիլ որ թէ՛ Գահիրէի սնտուկին ելեմտական վիճակի բարեօրման, թէ՛ կալուածոց վերաբերեալ զանազան խնդրոց հետզհետէ լուծուին և թէ՛ Ս. Աստ- ուածածին եկեղեցւոյ վերանորոգութեան ձեռնարկի յաջողութիւնը Նորին Վսեմու- թեան Թագաւոր փաշայի մասնաւոր աշխա- տութեան և ազգասիրական ջանից արդիւնքն եղած են և պիտի լինին: Գահիրէի ազգա- յին գործոց վիճակն այն նախանձելի դու- թեան պիտի հասնի անշուշտ շնորհիւ Նորին Վսեմութեան, ինչ վիճակի մէջ որ կը գըտ- նուին այսօր Ալեքսանդրիոյ ազգային գոր- ծերն, որ Նորին Վսեմութեան մասնաւոր խնամատարութեան արդիւնքն է:

Աւելորդ չեմ համարիլ յիշել որ Ս. Չատ կի օրերուն զինուորական յանցանք մըը- տըն՝ շինական շրջայակապ աշխատութեան զատապարտեալ կիսաբացի Սիմոն Թորոս- եան անուն ազգայնոյն Բարձրաստիճան Սը- տիվ Թէֆֆիզ փաշայի մարդասիրական բարձր զգացման առջև ներման արժանա- նայլու գործոյն մէջ ևս մեծ աշխատանք ունեցած է Ն. Վսեմութիւն Թագաւոր փա- շա Յակոբեան:

Գահիրէի ազգային գործոց վիճակին աս- տիճանաբար բարեօրման հետ, այլ ազգա- յին բարձրագոյն շահուց վերաբերեալ կա- րեւոր խնդիրներ լուծուան և կարգադրութեան մէջ կը գտնուին այսօր զարձեալ շնորհիւ և աշխատութեամբ Ն. Վսեմութեան Թագաւոր փաշայի:

Ազգային Գաւառական Վարչութեան Պատուարժան Գաղաքական Ժողովն հան- գերձ իւր Նախագահով Ն. Վսեմութեան Թագաւոր փաշայի սոյն ազգասիրական ձեռ- նարկութեանց և վստաստից առջև փութաց ուղղել առ Ն. Վսեմութիւն սո հետեալ պաշտօնագիրն:

«3/15 Ապրիլ 1887

«Վսեմափայլ փաշա. «Պատիւ ունեցաւ Ժողովս ստանալ Չեր «Վսեմութեան Ապրիլ 1/15 ամսաթիւ գրու- «թիւնն ի մասին Գահիրէի հայ գաղթա-

«կանութեան ալգային կարեոր պիտոյից ի «նպատակ տրո ամ պարահանդիսին և Պողոս «էֆ. կարապետեանի ազգային սնտուկէն «ս նեցած պահանջից վճարման և այլ հաշ- «ուական գոր'ն յովանաց, ոյր հետ ստա- «ցաւ նաև Պողոս էֆէնտիի Ազգային Վար- «չութեան հետ ունեցած զաշնագիրն և «միջազգային զատարանին պատանդից «բարձման պաշտօնավճարը:

«Ժողովս իւր այսօրեայ գումարման ա- «տենագրութեան մէջ անցուց Չեր Վսե- «մութեան նոյն գրութիւնն իւր ամբողջու- «թեամբ. ըստ այնմ և հաշուական բոլոր «գործողութիւնը պիտի անցնին Առաջնոր- «պարանին ազգային տուեմարաց մէջ:

«Այս առթիւ կը փութայ ժողովս իւր «շնորհակալութիւնն յայտնել առ Վսեմու- «թիւնն Չեր այն հոգածութեան և ազգա- «սիրական ջանից համար, զոր սիրայօժար «ի գործ դնել կը հաճի Չեր Վսեմութիւն «ի բարեօրման ազգային ելեմտական գոր- «ծոց Գահիրէի և ի վերանորոգութիւն Ս. «Աստուածածին եկեղեցւոյ:

«Հաճեցէք, Վսեմափայլ փաշա, ընդու- «նիլ Ժողովոյ շնորհակալեաց հետ խորին «յարգանաց հաւատքին»:

(Ստորագրութիւնը)

Ազգային Գաւառական Վարչութեան Պատուարժան Գաղաքական Ժողովն և Ու- սումնական ու Թագալական Խորհուրդներն սիրեցին ամենայն անձնուիրութեամբ աշ- խատիլ ի կարգադրութիւնն ազգային խնդ- րոց, ի բարեկարգ յառաջադիմութիւնն ազ- գային երկտեղ վարժարանին և ի պայծա- րութիւն Ս. եկեղեցւոց, որչափ ներեցին ի- րենց ժամանակն ու միջոց:

Արժան է յիշատակել աստանօր որ Գա- հիրէի Բարեօրմական Պատուարժան ըն- կերութիւնն ալ 150 եգիպտական ոսկի նը- պատանց խորհեան ազգային երկտեղ վար- ժարանին: Բարեօրմական ընկերութեան սոյն նպատակն ազգային սնտուկին անձուկ կացութեան առջև ազգասիրական գովելի գործ մ'էր, զոր ամենայն սիրով փութաց կատարել, սրով վերացոյց ազգային վար- ժարանին վեցամեայ մատակարարութիւնն, որով և ազգային կրթական գործոյն ծառա- յութիւնն մը մատոյց:

Այս միամտայ շրջանին մէջ սոյն ազ- գային հանրական խնդիրներէն զատ կարգ մ'ազգային մասնաւոր խնդիրներ՝ ինչպէս են ժառանգական կրեմալից խնդիրներ ու շարութեան անուկեցան և Առաջնորդա- րանի արդի ունեցած իրաւաստութեան անհամարիւն մէջ կարգ մը ժառանգական խնդիրներ լուծուելով աւարտեցան, կարգ մը մասամբ լուծուելու և կարգ մ'ալ գեռ խնդրոց կարգին մէջ են:

Առանց այլ ևս մանրամասնելու այլ և այլ մասնական և անհատական խնդրոց կարգադրութիւնն ու լուծումը, կը վեր- ջացնեմ զոյն համառօտ տեղեկալիքը, վըս- տահ լինելով որ Չեր Բարձր Սրբազնու- թիւնն և Պատկառելի Խոսան Ժողովն նե- րողամիտ կը լինի մէկ տարուան ժամանա- կամիջոցի մէջ այսչափ ինչ գործուելուն համար:

Կարելի էր, Սրբազան Տէր, թերևս քան զայս աւելին գործել: Չներեցին սակայն գիտարին պարագայներ, որք գրեթէ ան- ընդհատ տեղի ունեցան, զորոց այժմէն խօսիլ աւելորդ կը համարիմ և անգուտ:

Մեամ աղօթակից Առաջնորդ Հայոց Եգիպտոսի ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵՍՍ 29 Մայիս 1887 ի Կ. զօլիս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պալապ մեր թղթակցէն:
Յունաց նորնոր Պատրիարքը մայրաքաղաքը հասաւ Կոստանթնուպոլիսը:

Յունորդէն հաղորդուած լուրերու նայելով Եփեսոսի Պատրիարքի Այնորդէն բամուսեւոլու տեսարանը շատ արտասուց եղած է:

Յունորդէն երբ ճամբայ կ'ենէ գէպի Պոլիս, Եփեսոսի Սրբազան վերջին անգամարտասուեցով կ'ըսէ. «Կը սիրէի այդ ժայտերը և հիմա ցաւելով կը բաժնուիմ անոնցմէ»:

Նեկայ շարժուման տղգային կարևոր լուրերէն մին՝ Խառն Ժողովոյ տուած որոշումն է, ըստ որում՝ յետ այսորիկ Առաջնորդական ընտրութեան պարագայից մէջ, տրամադրելի եկեղեցականներու ցանկը ղըրկուի Գաւառ. վարչութիւններու, որպէսզի այդ ցանկին հետեղութեամբ կատարեն Առաջնորդի ընտրութիւնը: Այս ցանկն պիտի պատրաստուի Խառն Ժողովոյ կողման:

Ըստ վերջին նախարարական որոշման՝ Երուսաղիմում օտարհրապտակ և թէ տեղահասարակ փաստարանները՝ թուրքոյ զատարաններուն առջև արտեսանին ի գործ ղընելու համար, պարտիւ ընտրութիւն անցնել Պոլսոյ Օսմ. Իրաւագիտական վարժարանի կանոնն առջև:

Ըստ սոյն որոշման՝ վկայական շունեցող փաստարաններն ալ այլ ևս փաստարանելու իրաւունք չը պիտի ունենան ի բաց առեալ անոնք որ 7 տարի է վեր այդ արուեստով կը զբաղին արդէն:

Առաջինի Պատրիարքէն զրկուած թղթակցութենէ մը հետեւալը կը քաղենք:
Գաւառէ. — Պարսկական կառավարութեան Պերճիգացի պաշտօնատարները օգտակար ծառայութիւններ կը մատուցանեն մեր երկրին: Երանը հարկեր զրած են նպարեղեններու արտադրանք մը, ասոր շնորհիւ ցորենը քառասպտակի արտադրած է նախորդ տարիներու վրայ և ժողովուրդը կապրի աւելի դիւրութեամբ:

Վեհափառ Շահը մեծ ջանքեր կընէ վարչութիւնը վերանորոգելու համար: Անգամ մը որ չարագործը կը պատժուի, ամեն նախատարեալ սպառնալիցիները կը սիրէ Պարսկաստանի մէջ, թէև կանոնաւոր բանակ մը և կազմակերպուած ոստիկանախումբ մը չիկայ հոն:

Գողը և մարդասպանը կը պատժուին անմիջական կերպով, առանց օգուտ քաղելու դատաստանական կարգի ուշացումէն:

Ասիէ երկու ամիս առաջ խայտառակ մարդ մը Ռեմիոյ լեռներուն մէջ պատուաւոր ու 14 տարեկան պատանիի մը կը հանդիպի, աղուն զիմազորութենէն զսլորացած, կը կարէ անոր ձեռքերը, ոտքերը ու գլուխը:

Կառավարիչը ձերբակալել կուտայ այս ճիւղը և շուտ մը գայն կը զրկէ հանրային հրապարակը՝ կարծ հարցափորձ մը ընելէ ետքը. հոն՝ իրեն կապակին գոհին ծնողը և զահիճը (Միւրկակ)՝ Մարգասպանը կը պաղատի աղուն ծնողացը որ զրամական տուգանք մը ընդունին, անոնք կը մասն

անողը, այն ատենը զահիճը կը կորէ անոր ոտքերն ու ձեռքերը և գլուխը ճիշդ ինչպէս որ ինք ըրած էր ինչդ տղուն, ներկաները կանիճէին ոճրագործը և կը պոտային զահիճին որ ալ աւելի անգամարար զայն չարչարէ:

Որքան ոճիրներ պիտի զանց անուէին թուրքոյ մէջ եթէ կառավարութիւնը ժամ առաջ պատմը յանցաւորները առանց իրարու թեման ցեղի և կրօնի:

Այն պարագային որ յանցապարտները պատժուին Պարսկաստանի մէջ, պատուար մարդիկ կընան խաղաղութեամբ իրենց գործերով զբաղելու. պատճառն այս է որ հայերը — ինչպիսի, հեղահամբոյր և աշխատակէր ցեղ — ամեն օր նոր քայլել կանեն յառաջդիմութեան ճամբուն մէջ: Անոնք ունին Գաւառի մէջ բաւական ծաղկեալ զբաղողներ, Տիկիւններ ընկերութիւններ, ընթերցատուններ և թատերական ներկայացումներ:

Թէհրան. — Օջանէս խառն Մասէհանց արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարներէն՝ մեկնած է Պէոլիս, որ կոչուած է զեւպանական խորհրդակցի պաշտօնը վարելու:

Վեհափառ Շահը՝ Արիւս և Արիւս պատանշանին առաջին կարգը շնորհած է Տէրունեան Սրբազանին և երկրորդ կարգը՝ զընդամեն Նեմփոս խառն Պոյաճեանին:

Շատ մը հայեր որոշած են կազմել ախիւթներու ընկերութիւն մը, նպատակ ունենալով թէհրանի մէջ մեծ տպարան մը հաստատել, կատարելագործուած մեքենաներով զորոնք Երուսաղիմ բերել պիտի տան: Կառավարիչն հրատարակել լրագիրներ Հայերէն, Պարսկերէն և Ֆրանսերէն լեզուով:

Գարձեալ «Արմէնի» Նիւ-Եօրքի թղթակցից կըսէ թէ «Ամերիկայի մէջ կը գրանուին շատ մը Հայ զերասանուհիներ որ Անգլիերէն լեզուով կը խաղան լաւագոյն թատրոններէն մէկը քանիներու մէջ: Մեր քաղաքին Հօմ ժողովարար զրած է այս գեասանուհիներէն մէկուն՝ Օրդ. Ֆլորա Զապելի կենդանագիրը, որ այս ժամուս Սան Թոմասի գերը կըտանան, Տէլիս թէլագրին մէջ»: Պ. Մանկասար Մանկասարանի աղջիկն է այս գեղանի, թխագոյն, հայկական թիւիով և շատ ծափահարուած Ամերիկեան ժողովուրդէն:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Իւրեւրը վերակառած են շարքերու շրջանը Հայաստանի մէջ: Գեռ վերջերս, Մուշի մէջ սրէ անցուցած են 14 հոգիներ ու շատ մը կողոպուտներ կատարել յետոյ սուներ ու խանութներ կրակի տուած են:

«Առաջինի վերջին թիւէն հոն» ճոյքով կրիմանէն թէ՛ ողբալիւ Նուպար փաշայի յիշատակագրութիւնները քանի մ'ամիսէն լոյս պիտի տեսնեն, ֆրանսական Ակադեմիայի անդամ Պ. Էմիլ Օրիլիէէ գրուած նախաբանով մը: Նուպար փաշայի յուշագիրը կարևոր յայտնութիւններ պարտի պարունակէ Եգիպտոսի վրայ ինչպէս նաև Արևելեան խնդրոյ մասին:

Կ. Գալֆատան թատերադրակ գերասանը, որ անձանթ գէղմը մ'ըլ-

լալու չէ Արասահմանի թերթերը ընթերցողներուն, Պաթուսի թատրոնին մէջ խաղացած է Շէյքսպիրի Համլէթը: Ինչպէս Պաթուս ու Թիֆլիս՝ նոյնպէս հոս ալ միևնոյն յաջողութիւնը ունեցած է: Թատերասրահը լիվելցուն է եղեր, և տեղի ոյն երկուտարաթիւնը երեք արժամէ լաժակներ նուիրած է տաղանդաւոր ու ճարպիկ արթիւթին:

Ընդհանուր ջարդի ատեն Բաբերգէն կաթիլիկ Գեռնեան ու Մասէհաները պարագայէն օգտուելով իրենց քով ապաստանող 13 Հայ օրիորդներ (որոց հայրերն ու մայրեր սպաննուած են կարծելով) Երուսաղիմը զրկին մայրապետներ ընելու: Այսօր (Մայիս 30) սակայն Բաբերգէն մարդ մը, Տէր Ստեփանեան, 13 աղվանց մէջէն իւրը ազատել եկած է մայրապետական կեանքէն: Չը յուսացուի թէ պիտի յաջողի քանի որ մասէհաները ճիշդ կը թափեն պահել պահանջուած աղջիկը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտէյի շուրճ. — Խարբերոյցի վեց հոգիներ Ամերիկայէն վերադառնալով Փաթլի ընկերութենէն Մայիս 29ին պիւթիներ կորեցին Հայաստան երթալու: Գանի որ կէս ժամ մտոցեր էր շոգենաւուն ճամբայ ելլելուն նաւապետը դուրս կը անէ Հայերը, ըսելով որ ընկերութիւնը քառօր ժամ առաջ հեւազիր ստացաւ Մասէհան որ թուրքոյ քաղաքային խռովութեանց պատճառաւ կառավարական հրաման մը կ'արգիլէ ս և է Հայի մուտքն ի թուրքիս:

Երկու Հայ երիտասարդներ, մին էվէրէկցի իսկ միւսը Եգիպտոսի, Մայիս 29ին Մարտէլ ժամանեցին Փրանսական զինուոր գրուելու:

Այս օրերը շատ մը երիտասարդ թուրքեր կը տեսնուին Մարտիկոյ սրբաճարաններուն մէջ, որոնք հոս ու հոն կը խօսին թէ թուրքոյ ներկայ յոռի վիճակին պատճառը Հայոց անիրաւացի պահանջը եղաւ:

Մարտիկոյ բոլոր գրատուններուն մէջ գտնուած «Սուլթան Համիտ Ինթիմէ» գիրքերը գնուած է երիտասարդ թուրքերէն, որպէսզի Երուսաղիմ ալ չը նային Սուլթանին ճիւղային պատկերին իրենց անպատուութիւն կը համարին կը:

Մի ամիսէ ի վեր Հայաստանէն միայն երկու հոգիներ ելած են ի Մարտէլ: Այս պատճառաւ տեղւոյ Հայկական պանդոկին մէջ կան միայն 21 հոգիներ որոնք անհամբեր դրամի կը սպասեն Ամերիկա գանաւոր բարեկամներէն:

Կոյնակ

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Յարպի փաշա, 1882ի եգիպտական յեղափոխութեան հաշակաւոր հերոսը, որուն ներում շնորհուած ըլլալը «Նոր-Օրդի նախորդ թիւերէն» միտն մէջ ծանուցած էինք, ամայս 13ին Սէյլանէն պիտի մեկնի և հաւանօրէն Օգոստոս 1ին Գահրէէ հասնի:

Իսիլը ամառուան եղանակին մէջ մասը Պոլիս պիտի անցնէ: Պոլիսէն Բիթլիի գործակալութեան կը հեռագրեն թէ՛ Սուլթանը հացկերպ մը տուաւ երկու շարթի օր ի պատիւ Եգիպտոսի Խալիլին: Սուլթանը մտերմական տեսութիւն ըրած է Խալիլին հետ, որուն անակնկալ այցելութիւնը այլ և այլ մեկնութիւններու առիթ կուտայ:

1.500 Ֆրանկի որուն անուան շուրջը այնքան յուզողական մեծ աղմուկ դարձաւ, Մէտաթըրի Լաու շոգենաւով Փոս-Սայիսէն Մարտիկոյ մեկնել է: Նոյն շոգենաւին մէջ 15 ժանտախտի դէպք պատահած է:

Ամառայ 14ին՝ Փոստական ազգային սօնի տարեգարծի հանգէսը պիտի կատարուի Եգիպտոսի պարտէզին մէջ, ուր արդէն պատրաստութիւններ կը տեսնուին Տօնախմբութիւնը անցեալ տարին երէ աւելի փայլուն պիտի ըլլայ:

Ժամանաւոր Ո և է գէպը չիկայ, և Զակաղիկի հիւանդանոցին մէջ՝ երկու հոգի սպաքինած են նախորդ բռնութեան հետեւ:

Ինչպի մը ծովուն բաղնիքին մէջ Զորեքաթի օրը կոմսուհի Տիկիւն Ալեքսանդր տը Զօլէպ և Տիկիւն Քրիստիան Սինանօ քիչ մնաց ու պիտի խեղդուէին Սթէնիլ-Պայի ծովու պանթօններու մէջ:

Այլը մը զիւրեք ծովեզերէն 200 մէթր անդին տարած էր նոյն պէս իրենց հետ եղող պղտիկ աղիկ մը, բոլոր ուժերին սպառելու վրայ էր, երբ երկու արաքներ շուրջ նետուեցան ու դուրս հանեցին զանոնք օղ:

Ա Ս Ե Լ Ի Ն

Աժելիլն առաջին անգամ ե'րբ, ո'րք և սրմէ՝ հնարուած է գիտցող չիկայ: Բայց ստույլը գիտնէք թէ 3-4000 տարի առաջ Եգիպտոսից կ'ածիլուէին. ըսել է ամելիլն այն ժամանակներէ ի վեր հնարուած էր:

Հին Եգիպտոսացոյ թողոցած քանդակներու և պատկերներու մէջ դեռ կ'երևին սալիլիլի և ամիլուց մարդու յորինուածներ և որոնց մէջ ամելիլն ձեռք ճիշտ մեր արդի ամելիլներուն ձեւին կ'մանի:

Մովսէս իսկ որ մեզմէ գրեթէ 33 դար առաջ կ'ապրէր՝ կը պատուիրէ Հրէից ամիլուիլ: (Տես Աւետական):

Հէրոսոպ Յոյն պատմիչը (Յրդ դար Բ. Ա.) կը հաստատէ, թէ Եգիպտոսացոյ քուրմերը բոլորովին կ'ածիլուէին երեք օրը անգամ մը:

Յունաց և Հռովմէացոց մէջ ոմանք կ'ածիլուէին և ոմանք չէին ամիլուէր՝ ինչպէս յայտնի է այն ատեններէն մը՝ նայած արձաններէն և քանդակներէն որոց մէկ մասը մօրուք ունին և միւսները չունին:

Իսկ Պինոս, կիկերոն Աստծ. պատմիչներու համեմատ ամիլուելու սովորութիւնը ընդհանրապէս սկսած է Ազգեքսանդրէ ի վեր 400 տարի Բ. Ա. Յունաստանի մէջ, և 300 տարի Բ. Ա. Հռովմէացոց մէջ:

Տպաւ. «Միւրիւն». — Թ. Ս. Փափագեանի